

## ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ս. թ. մարտի 17-ին կայացավ ՀՀ ԳԱԱ տարեկան հաշվետու ընդհանուր ժողովը: Ժողովը մեկնարկեց նախօրեին՝ ակադեմիայի 5 գիտական բաժանմունքներում, լսվեցին բաժանմունքների գործունեության տարեկան արդյունքները, տեղի ունեցան լուրջ և շահագրգիռ քննարկումներ:

Բաժանմունքներում լսվեցին նաև հետաքրքիր գիտական զեկուցումներ: Նշենք նաև, որ զեկուցումների հեղինակները ոչ միայն ակադեմիայի գիտնականներն էին, այլև ՀՀ - ԳԱԱ արտասահմանյան անդամները:

Տարեկան ընդհանուր ժողովին ներկա էին ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, նախարարներ, Չինաստանի Հանրապետության դեսպանը, բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ, գիտական կառույցների ղեկավարներ, հյուրեր:

Հայոց եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ՝ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը ժողովի մասնակիցներին հաղորդեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Գարեգին Երկրորդի ջերմ ողջույնները, օրհնությունն ու գնահատանքը:

Բացելով ընդհանուր ժողովը, ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն ասաց, որ հաշվետու տարում աննախադեպ շատ են եղել ակադեմիայի ցավալի կորուստները, և խնդրեց ժողովի մասնակիցներին մեկ րոպե լռությամբ հարգել կյանքից հեռացած ԳԱԱ ակադեմիկոսներ Հրաչիկ Միմոնյանի, Ալեքսանդր Թալալյանի, Կարեն Պողոսյանի, Էվրիկ Աֆրիկյանի, Յուրի Չիլինգարյանի, Հարություն Թերզյանի, Աշոտ Կարապետյանի, Սերգեյ Գրիգորյանի, ԳԱԱ թղթակից անդամներ Հրաչիկ Թամրազյանի, Գագիկ Կրյուկյանի հիշատակը:

Ռադիկ Մարտիրոսյանը հայտնեց, որ մարտի 17-ին ակադեմիայի հնագույն ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը դարձավ 95 տարեկան և առաջարկեց շնորհավորել մեծանուն գիտնականի 95-ամյակը:

Ապա ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ժողովականներին հայտնեց, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը բազմազբաղության պատճառով ուշացած կմասնակցի ժողովին:

Այնուհետև ՀՀ ԳԱԱ 2016 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցումներով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Տարեկան ժողովի հարգելի մասնակիցներ, ասաց նա, հաշվետու տարին՝ 2016 թվականը, համազգային նշանակության խոշոր իրադարձություններով հագեցած առանձնահատուկ տարի էր: 2016 թ. լրացավ Հայաստանի Հանրապետության հիմ-

նադրման 25-ամյակը: Այս կարևորագույն տարեդարձի շրջանակներում ԳԱԱ գիտական կազմակերպություններում անց են կացվել հորելյանական միջոցառումներ, գիտաժողովներ, տարբեր բնույթի և մակարդակի հանդիպումներ, որոնք լուսաբանվել են տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներով: 2016 թ. ապրիլի սկզբին Ադրբեջանը պատերազմական գործողություններ սկսեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանի տարբեր հատվածներում: Թշնամին, ստանալով անհրաժեշտ հակահարված, հետ շարսվեց և դրանով ձախողվեցին նրա՝ հեռուն գնացող ծրագրերը: Ապրիլյան պատերազմը մեկ անգամ ևս ցույց տվեց մեր ժողովրդի, հայության կամքը միավորվելու և ցանկացած թշնամու հակահարված տալու՝ անկախ նրա զինվածության աստիճանից:

2016 թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ ԳԱԱ Նախագահությունում տեղի ունեցավ ՀՀ վարչապետ Կ. Կարապետյանի հանդիպումը ակադեմիայի համակարգի բոլոր գիտական կառույցների և նախագահության ղեկավար կազմի հետ: Հանդիպման ընթացքում Ռ. Մարտիրոսյանը համառոտ ներկայացրեց ակադեմիայի կառուցվածքը, գիտատեխնիկական ծրագրերը, ստացված կարևորագույն հիմնարար արդյունքները և այն գնահատականները, որոնք տրվել են միջազգային հեղինակավոր կառույցների կողմից. սրանցից հետևում է, որ մեր գիտության արդյունքները տարածաշրջանում բարձր են, սնծովյան տարածաշրջանի 10 երկրների արդյունքների շարքում 3-րդ տեղում:

Հանդիպման ընթացքում մի շարք ինստիտուտների տնօրեններ նշեցին այն առկա դժվարությունները, որոնք խոչընդոտում են բարձր մակարդակի գիտական արդյունքների ստացմանը և տնտեսության տարբեր բնագավառներում դրանց կիրառությանը:

Հանդիպման վերջում վարչապետ Կ. Կարապետյանը անդրադարձավ հանդիպման ընթացքում հնչեցված հարցերին: Նշեց, որ կառավարության գերատեսչությունների ղեկավարներին կտրվեն ստույգ հանձնարարականներ, որպեսզի հանդիպեն գիտահետազոտական կառույցների ղեկավարների հետ և բարձրացված կարևոր հարցերի համար գտնեն լուծումներ:

2016 թ. գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտներում և կենտրոններում շարունակվել են հիմնարար և կիրառական բնույթի գիտական մշակումները, պահպանվել է բարձր մակարդակի գիտական արդյունքների ստացման ավանդույթը: Արտասահմանյան հեղինակավոր գիտական պարբերականներում տպագրվել են 831 գիտական հոդված: Եթե նշված արդյունքները համեմատենք 2015 թ. ստացված արդյունքների հետ, կտեսնենք, որ հաշվետու տարում պահպանվել են հիմնարար բնույթի արդյունքների քանակը և նրանց գիտական մակարդակը, հետևաբար և պահպանվել է գիտական հետազոտությունների իրականացման բարձր մակարդակը մեր տարածաշրջանում:

Հիմնարար բնույթի գիտական արդյունքները ներկայացվել են նաև Համաշխարհային հանրահայտ հրատարակիչների կողմից տպագրված մեր հեղինակների թվով 22 մենագ-

բություններ, որոնք շատ բարձր գնահատականների են արժանացել միջազգային գիտական հանրության կողմից:

Այնուհետև Ռ. Մարտիրոսյանը հանգամանորեն անդրադարձավ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բնագավառի, քիմիայի և երկրաբանության բնագավառի, կենսաբանական և կիրառական ուսումնասիրությունների կարևորագույն արդյունքներին:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հրատարակվել է «Հայոց պատմություն» բազմահատորյակի չորրորդ հատորի երկրորդ գիրքը, որն ընդգրկում է 1945–1991 թթ.:

- Հրատարակվել է «Հայաստանի հարակից երկրների պատմություն» քառահատորյակի երկրորդ հատորը, որն իր բովանդակությամբ, հարցերի և ուսումնասիրությունների ընդգրկմամբ նախատիպը չունի Հայաստանում:

- Պեղվել և ուսումնասիրվել է ՀՀ և Արցախի տարածքի 22 հուշարձան: Պեղումներով և լաբորատոր անալիզներով ձեռք բերված տվյալների շնորհիվ զգալիորեն թարմացվել է Առաջավոր Ասիայի, Հայոց պատմության և մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը, վեր են հանվել քարե դարի ելակետային փուլերից մինչև ուշ միջնադար ընկած ժամանակահատվածի պատմամշակութային միջավայրի ձևավորման օրինաչափություններն ու առանձնահատկությունները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և արտասահմանյան գիտական կառույցների հետ՝ ապահովելով ԳԱԱ համակարգի աշխատողների ակտիվ մասնակցությունը միջազգային կառույցների գործունեությանը՝ ելնելով գիտության զարգացման ակադեմիայի ռազմավարությունից:

ԳԱԱ-ի միջազգային համագործակցությունը իրականացվել է միջակադեմիական համաձայնագրերով, գիտական կենտրոնների և ինստիտուտների միջև կնքված երկկողմ պայմանագրերով, միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցությամբ, ԳԱԱ-ի արտասահմանյան անդամների միջոցով գիտական համագործակցությամբ:

Միջազգային համագործակցության կարևոր ուղղություններից է արտասահմանյան գիտական կենտրոնների կառույցների ստեղծումը Հայաստանում: Այս ուղղությամբ արդյունավետ գիտական աշխատանքներ են իրականացվել ԳԱԱ-ի, ԿԳՆ ԳՊԿ-ի և Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (CNRS) միջև: Կնքված եռակողմ համագործակցության պայմանագրի հիման վրա ստեղծված լաբորատորիաները ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի և Բուրգունդիայի ու Լիոնի Կլոդ Գալի

Բերնար համալսարանի համատեղ լաբորատորիայում կատարվել են աշխատանքներ «Ճառագայթման փոխազդեցությունը նյութի հետ. Ատոմներից դեպի պինդ մարմին» թեմայով:

ԳԱԱ-ն անդամակցում և համագործակցում է տարբեր միջազգային գիտական կառույցների և ակադեմիաների հետ՝ «Գիտական միջազգային խորհուրդ» (ICSU), «Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիա (MAAH), «Գիտությունների ակադեմիաների համաշխարհային ցանց» (IAP), «Գիտությունների ակադեմիաների եվրոպական ֆեդերացիա» (ALLEA) և այլն: Միջազգային համագործակցություններից կարելի է նշել միջակադեմիական, միջպետական և միջգերատեսչական ու միջինստիտուտային համագործակցությունները, որոնք իրականացվում են համատեղ կնքված պայմանագրերի հիման վրա:

• 2016 թ. նոյեմբերի 7–10-ը ՀՀ ԳԱԱ պատվիրակությունը նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի գլխավորությամբ Չինաստանում մասնակցել է Պեկինի Ազգային գիտական կենտրոնների առաջին միջազգային գիտական ֆորումին՝ նվիրված «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու նախաձեռնությանը»: Ֆորումի գլխավոր նպատակն էր ազգային ակադեմիաների և հետազոտական կազմակերպությունների միջև գտնել համագործակցության մեխանիզմներ՝ աջակցելու համատեղ գիտական հետազոտությունների իրականացմանը:

Ավարտին ընդունվել է «Չինաստանի և մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու երկրների միջև գիտության և տեխնոլոգիաների համագործակցության նոր էջ. Պեկինի «հոչակագիրը»: Հոչակագրով ֆորումին մասնակցող ազգային գիտական և հետազոտական կազմակերպությունները հանդես են եկել հայտարարությամբ՝ կոչ անելով միավորել ջանքերը հանուն ընդհանուր զարգացման: Այցի ընթացքում ԳԱԱ պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Չինաստանի գիտությունների ազգային ակադեմիաների նախագահության ներկայացուցիչների հետ: Պայմանավորվածություն է ձևավորվել մոտ ապագայում Չինաստանի ակադեմիաների պատվիրակությունները կժամանեն Հայաստան՝ ամրապնդելու և խորացնելու երկու երկրների գիտության կառույցների միջև առկա համագործակցությունը:

Կարևորվել է հայ-հնդկական, հայ-ավստրիական և հայ-տաջիկական համագործակցության ակտիվացմամբ: Պլանավորվում է 2017 թ. կնքել համագործակցության պայմանագրեր Հնդկաստանի տիեզերական հետազոտությունների կազմակերպության, Ավստրիայի և Տաջիկստանի գիտությունների ակադեմիաների հետ:

• Միջպետական և միջգերատեսչական համագործակցություններից են տնտեսական միջկառավարական հանձնաժողովի կողմից իրականացվող հայ-ռուսական, հայ-լիտվական, հայ-լատվիական, հայ-թուրքմենական, հայ-հնդկական, հայ-չինական համագործակցությունները: Հայ-ռուսական համագործակցության կարևոր ծրագիր է Բյուրականի

աստղադիտարանի և ՌԴ «Ռոսկոսմոս»-ի հետ կնքված տիեզերական տարածության հետազոտման և խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում համագործակցությունը: Բնաստիտուտների համագործակցությունը շարունակվել է նախորդ տարիների ընթացքում հաստատված գիտական ծրագրերով: Կարելի է հիշատակել ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի և ամերիկյան «Բնտեգրա» կազմակերպության հետ կնքված եռակողմ պայմանագրով ստեղծված լաբորատորիան, որը շարունակում է հզոր ԳԲՀ կիսահաղորդչային սարքերի նախագծման և հետազոտման աշխատանքները:

• Շարունակվել են ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և ՌԳԱ Ա. Սևերցևի անվան էկոլոգիայի և էվոլյուցիայի պրոբլեմների ինստիտուտի կենդանաբանության բաժանմունքի համատեղ գիտափորձարարական կենտրոնի աշխատանքները:

• Բյուրականի աստղադիտարանը երիտասարդ մասնագետների համար կազմակերպել է V միջազգային ամառային դպրոցը և իրականացրել «Անկայուն տիեզերք» միջազգային գիտաժողովը՝ նվիրված ԲԱ-ի 70-ամյակին՝ մինչև 46 արտասահմանցի գիտնականների մասնակցությամբ:

• Սեպտեմբերի 27–29-ը ԳԱԱ էկոկենտրոնը, ՀԱՊԿ-ի երևանյան ներկայացուցչությունը, Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնը Երևանում անց են կացրել «Շրջակա միջավայրի անվտանգության հիմնախնդիրները» ՀԱՊԿ անդամ-երկրների միջազգային գիտաժողովը:

• Մեխանիկայի ինստիտուտը, Հայաստանի տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի, ՀՀ կրթության և գիտության նախարարության ԳՊԿ, ՌԴԳԱ Ա. Իշխանսկու անվան մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտի, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի պետական համալսարանի հետ համատեղ հոկտեմբերի 3–7-ը Ծաղկաձորում կազմակերպել են երիտասարդ գիտնականների միջազգային «Մեխանիկա» դպրոց-գիտաժողովը, որին մասնակցել են 55 հայ և արտերկրից ժամանած 21 գիտնականներ:

• Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը TEMPUS նախագծի շրջանակներում հոկտեմբերի 29–30-ը «Անդրկովկասյան տարածաշրջանում շարունակական ուսուցման գործիքների մշակում. էլուսուցում» թեմայով կազմակերպել է միջազգային սեմինարներ, որոնց մասնակցել են նաև արտասահմանցի գիտնականներ:

• Ելնելով իր ռազմավարությունից՝ ԳԱԱ-ն ապահովել է երիտասարդ գիտնականների մասնակցությունը գիտության տարբեր ոլորտներում իրականացվող միջազգային հանդիպումներին և միջոցառումներին: Համաձայն ԳԱԱ-ի և Լանդաուի Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների հիմնադրամի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի՝ հունիսի 26-ից հուլիսի 1-ը ԳԱԱ-ից՝ ֆիզիկայի ոլորտի, 1 երիտասարդ գիտնական մասնակցել է Նոբելյան մրցանակակիրների հետ 66-րդ հանդիպմանը:

• 2016 թ. սկսած՝ «Հորիզոն 2020» ծրագիրը Հայաստանի գիտնականներին ավելի մեծ հնարավորություններ է ընձեռել՝ մասնակցելու ծրագրին և ֆինանսավորվելու նրա կողմից:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ  
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների հետ համագործակցության ձևերը բազմազան են ու բազմաբնույթ և ընդգրկում են մի շարք կարևոր ուղղություններ՝ համատեղ հետազոտությունների իրականացում և հետազոտական նոր ծրագրերի մշակում, մասնագետների պատրաստում և վերապատրաստում, արտասահմանյան գիտական կենտրոնների և ԳԱԱ համակարգի կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի կնքում, համատեղ աշխատությունների պատրաստում, մասնակցություն Հայաստանում կազմակերպվող գիտակրթական և գիտակազմակերպական միջոցառումներին, համատեղ միջազգային գիտաժողովների կազմակերպում:

Գիտական կապերի և համագործակցության սերտացման շնորհիվ կիրառական բնույթի հետազոտություններում օգտագործվում են նաև արտասահմանյան անդամների լաբորատորիաների ժամանակակից սարքավորումները և հնարավորությունները միջազգային չափանիշներին համապատասխան հետազոտություններ կատարելու համար, ինչը շատ դեպքերում հնարավոր չէ իրականացնել տեղական միջոցներով: Նման հետազոտությունների արդյունքների տպագրումը և զեկուցումը գիտաժողովներում նպաստում են Հայաստանի գիտության միջազգային վարկանիշի բարձրացմանը: Համատեղ հետազոտությունները նպաստում են նաև Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխանող արդի ուղղությունների զարգացմանը:

Արտասահմանյան անդամներն ակտիվորեն մասնակցել են ՀՀ-ում կազմակերպվող գիտական, գիտակազմակերպական միջոցառումներին՝ աջակցելով ծրագրային և կազմակուրսների աշխատանքներին, նրանց գործունեության շնորհիվ ավելացել է նաև միջազգային ճանաչում ունեցող գիտնականների մասնակցությունը Հայաստանում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին:

## ԳԻՏԱԿԱՆ ԿԱՂԵՐ

2017 թ. հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ կազմում ընդգրկված են 52 ակադեմիկոս և 57 թղթակից անդամ: Հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ-ի աշխատողների ընդհանուր թիվը 4041 է, որոնցից 2444-ը գիտական աշխատողներ են՝ 342-ը գիտության դոկտորներ, 1124-ը գիտության թեկնածուներ, 978-ը գիտական աշխատողներ՝ առանց գիտական աստիճանի:

Հաշվետու տարում ԳԱԱ համակարգում աշխատանքի է ընդունվել 157 երիտասարդ մասնագետ, որոնցից 36-ը ընթացիկ տարվա շրջանավարտներ են: Համակարգի աշխատակիցներից 9-ը պաշտպանել են դոկտորական, 41-ը՝ թեկնածուական ատենախոսություններ: ԳԱԱ համակարգի և այլ կազմակերպությունների համար երիտասարդ կադրեր է պատրաստում ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը, որն իրականացնում է կրթական ծրագրեր մագիստրոսական և ասպիրանտական մակարդակով: Ուսումնական ծրագրերը կենտրոնը հիմնականում իրականացնում է գիտահետազոտական կառույցներում, որն ունի որոշակի առավելություններ՝ կենտրոնացված ուսումնական համակարգի համեմատ: Մշակված և շրջանառության մեջ դրված ուսումնական ծրագրերը հավանության են արժանացել հանրության կողմից: Որոշ ծրագրեր քննարկումներ են անցել միջազգային համագործակցության ճանապարհով՝ կենտրոնի կողմից շահած դրամաշնորհների միջոցով:

Գիտական կադրերի պատրաստման և գիտական հետազոտությունների ակտիվացման գործում կարևորվում է ԳԱԱ և այլ գիտական կազմակերպությունների, բուհերի հետ համատեղ գիտակրթական և հետազոտական լաբորատորիաների ստեղծումը: ԳԱԱ-ի մի քանի ինստիտուտներ նմանատիպ կառույցներ են ստեղծել հանրապետության առաջավոր բուհերում: Շարունակվել է միջազգային գիտատեխնիկական ծրագրերով բարձր որակավորման կադրերի (գիտությունների թեկնածու) պատրաստման ծրագիրը: Այս առումով արժանի է հիշատակել ֆիզիկական հետազոտությունների, երկրաբանական գիտությունների, հնագիտության և ազգագրության ինստիտուտների և Ֆրանսիայի, Գերմանիայի առաջավոր համալսարանների հետ իրականացված մի շարք ծրագրերը:

## ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

2016 թվականին գիտական բոլոր ծրագրերով պետական բյուջեից ստացվել է 6.8 միլիարդ դրամ ֆինանսավորում: Համակարգի աշխատողների ամսական միջին աշխատավարձը մեկ մարդու հաշվով, առանց արտաբյուջետային միջոցների, կազմել է 121.511 ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ այն գրեթե չի փոփոխվել: Արտաբյուջետային ֆինանսավորումը հաշվետու տարում կազմել է 1.8 միլիարդ ՀՀ դրամ: Արտաբյուջետային միջոցների ավելի քան մեկ միլիարդ դրամը համակարգի աշխատողները ստացել են 61

տարբեր դրամաշնորհային ծրագրերից: Ծրագրերից բացի, կատարվել են նաև պայմանագրային աշխատանքներով մատուցված մեծ ծավալի տարաբնույթ ծառայություններ:

Այստեղ ցանկանում եմ հիշատակել, որ վերջին երկու տարվա ընթացքում Բյուրականի աստղադիտարանի կիրառական աստղագիտության բաժնում իրականացվել են տիեզերական հետազոտությունների հետ կապված պայմանագրային աշխատանքներ: Նախորդ տարիներին մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել հիմնականում Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում: Դրամաշնորհային ծրագրերով կատարված աշխատանքները նպաստում են միջազգային համագործակցության, իսկ պայմանագրային աշխատանքները՝ կիրառական բնույթի հետազոտությունների ընդլայնմանը: Դրանք նպաստում են երկրի տնտեսության զարգացմանը, որոշակի կիրառություն ունեն նաև պաշտպանական ծրագրերում: Արտաբյուջետային միջոցների աղբյուր կարող է հանդիսանալ ինստիտուտներում փոքրածավալ արտադրությունների կազմակերպումը: Նմանատիպ աշխատանքներ են իրականացվել «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական, օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոններում, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, քիմիական ֆիզիկայի ինստիտուտներում:

Արտաբյուջետային միջոցները զգալի կապելանան, եթե առաջիկա տարիներին մի շարք ինստիտուտների ինֆրակառուցվածքը համալրվի նորագույն տեխնիկական միջոցներով: Այս կարևոր աշխատանքի համար մրցութային սկզբունքով կօգտագործվեն վերջին տարիների ընթացքում մեզ հատկացված փոքրածավալ ֆինանսական միջոցները:

#### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2016 թվականին համակարգի աշխատողների սոցիալական բնույթի հարցերը եղել են ԳԱԱ Նախագահության ուշադրության կենտրոնում: Նախորդ տարիների համեմատ, ցավոք, հաշվետու տարում այս բնագավառում շոշափելի դրական արդյունքներ չեն արձանագրվել: Որպես ձեռքբերում կարելի է նշել սոցիալական փաթեթի ցուցակներում աշխատողների ժամանակին ներգրավվածությունը: Վերջնական լուծումներ ստացան երկարացված արձակուրդի և գիտական աստիճանների համար տրամադրվող հավելավճարի հարցերը: Որոշակի քայլեր են արվել բնակելի նոր շենքի շինարարության փաստաթղթերի կազմման և հաստատման հարցերում: Սա երկարատև ձգձգվող հարցերից է:

Սոցիալական դժվար լուծելի խնդիրներից է բնակարանային հարցը, որն ավելի խոցելի է երիտասարդների դեպքում: Ցավոք, ձգձգվում է նոր՝ 164 բնակարան ունեցող շենքի շինարարության սկիզբը: Նույնիսկ որոշ շահառուներ դուրս են եկել նախնական ցուցակներից:

Սոցիալական բնույթի խնդիրներից է նաև աշխատանքային պայմանների բարելավման հարցը: Կարևոր է համակարգի անշարժ գույքի՝ «շենքշինությունների» շահագործման և պահպանման հարցը: Ինչպես գիտենք, ամբողջ անշարժ գույքը գտնվում է պետական գույքի վարչության հաշվեկշռում, սակայն նշված ծախսերի համար ոչ մի դրամ որևէ



տեղից չի հասկացվում: Երկու տարի առաջ պետական կոմիտե ներկայացվեց նշված օբյեկտների վերանորոգման հայեցակարգ, սակայն մինչ օրս դրանց ընթացիկ, փոքր ու մեծ վերանորոգումները իրականացվում են ինստիտուտների սուղ ֆինանսական միջոցներից: 2007–2009 թվականներին ԳԱԱ համակարգում իրականացվեց առաջին փուլի օպտիմալացման գործընթաց: Արդյունքում ազատվեց մոտ 26 հազար քառակուսի մետր տարածք: Ըստ այդ ծրագրի՝ ազատված տարածքները պետք է վաճառվեին, իսկ ստացված գումարները ուղղորդվեին տվյալ ինստիտուտի ընդհանուր զարգացմանը (ինքնակառուցվածք, արտադրական ծրագրեր, նոր գիտական լաբորատորիաներ): Անցած տարիների ընթացքում ոչ մի քառակուսի մետր տարածք չի վաճառվել, ընդհակառակը, դրանց պահպանման ծախսերը լրացուցիչ բեռ են ինստիտուտների համար:

Գիտական հետազոտությունների թվաքանակի և որակի ավելացման կարևոր նախապայման է ժամանակակից գիտական սարքավորումներով հագեցած լաբորատորիաների առկայությունը: ԳԱԱ համակարգի կառույցների սարքավորումները հնացել են և՛ ֆիզիկապես, և՛ բարոյապես, իսկ նոր սարքավորումների ձեռքբերումը կապված է լրացուցիչ, մեծածավալ ֆինանսական ներդրումների հետ:

#### ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ինստիտուտների (կազմակերպությունների) ամրապնդումը հիմնարար և կիրառական հետազոտությունների շարունակականության և զարգացման համար ՀՀ ԳԱԱ-ն շարունակելու է իր ռազմավարության հստակեցումը մոտակա հնգամյակի կտրվածքով, նախատեսվում է պետական պատվերի ձևավորում՝ ելնելով կառավարության ծրագրերից և որպես հիմք ընդունելով «ՀՀ ԳԱԱ 2015–2020 թթ.» հիմնարար գիտական ծրագրերը: Ինստիտուտների հանգուցային խնդիրն է՝ իրականացնել բալանսավորված մոտեցում հիմնարար և կիրառական հետազոտություններին՝ նկատի ունենալով կիրառական արդյունքների կարևորությունն ու երկրի տնտեսական և սոցիալական զարգացման համար:

Նախատեսվում է կատարել ինստիտուտների հիմնական գիտական ուղղությունների վերլուծություն և դրանց ճշգրտում՝ հաշվի առնելով գերակա գիտատեխնիկական խնդիրների լուծման հիման վրա միջոցիսցիպլինար հետազոտությունների իրականացման հնարավորությունը և համատեղ կիրառական մշակումների հիման վրա արդյունքների առևտրայնացման իրականացումը: Այդ ուղղությամբ կարևորվում են համակարգի կառուցվածքի բարելավումները թեմատիկ գիտահետազոտական կլաստերների (խմբավորումների) միջոցով:

Ինստիտուտների ամրապնդման և ռազմավարական իրատեսական պլանի մշակման նպատակով արդեն իսկ համակարգում իրագործվում է կազմակերպությունների գիտական գործունեության գնահատում՝ հիմնվելով հետևողական և ժամանակակից գնահատման և փորձաքննության վրա: Մշակվել է համապատասխան մեթոդաբանություն և ուղեցույցներ:

Ճգնաժամային է ինստիտուտներում բարձրորակ երիտասարդ դոկտորների և թեկնածուների պատրաստման խնդիրը: Նախատեսում ենք երիտասարդ գիտնականներին խթանելու ստարտ-ապ ընկերությունների ստեղծում որոշ ուղղություններով՝ ստանալով ինստիտուտների համապատասխան աջակցությունը:

Էլեկտրոնային ենթակառուցվածքի զարգացումը նպատակաուղղվում է ժամանակակից մրցունակ հետազոտությունների իրականացման նոր հարթակ ստեղծելուն և հանրապետության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը նպաստելուն:

Հիմնական նախագիծը այս բնագավառում նախատեսում է Հայաստանի սուպերկոմպյուտերային կենտրոնի ստեղծումը: Ստեղծվող համակարգը կապահովի հաշվողական մոդելավորման և մեծ տվյալների մշակման խնդիրների լուծում, որոնք կարևոր դեր են խաղում տնտեսության զարգացման և ժամանակակից գիտության ձևավորման ուղղությամբ՝ դառնալով կամուրջ գիտության և գիտակարգի միջև:

Կենտրոնի ռեսուրսները ենթադրվում է տրամադրել հետևյալ երեք ուղղությունների խնդիրների լուծմանը՝ կրթության և գիտության (մասնիկների ֆիզիկա, լույսի ճառագայթում, կենսամոլեկուլային համակարգեր, հաշվողական քիմիա, աստղագիտություն և տիեզերագիտություն, հաշվողական մաթեմատիկա և ինֆորմատիկա), բնապահպանության և արտակարգ իրավիճակների (կլիմայի փոփոխություն, օդի աղտոտվածություն, ջրերի կառավարում, մթնոլորտի մոդելավորում, երկրաշարժեր, Երկրի մասին տվյալների վերլուծություն), առողջապահության (կենսաբժշկական պատկերների մշակում, կենսաբժշկական պատկերների վիզուալիզացիա, էլեկտրոնային առողջապահական գրառումներ):

Նախնական հետազոտությունները ցույց են տվել, որ 200TFlops սուպերկոմպյուտերային ռեսուրսները բավարար են գիտական և հասարակական մարտահրավերների 2017–2020 թթ. խնդիրները հաղթահարելու օգտագործողների պահանջները: Ընդհանուր արժեքը կկազմի մոտ 2 միլիոն ԱՄՆ դոլար:

Նախագիծը, որպես ինովացիոն նախագիծ, ներկայացվել է ՀՀ կառավարությանը, Հորիզոն-2020 ծրագրին (մասնակցում են Թուլուզի ինֆորմատիկայի և հաշվողական գիտության ինստիտուտը, Մյունխենի տեխնիկական համալսարանի Լեյբնիցի սուպերկոմպյուտերային կենտրոնը, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը), իրականացվում են բանակցություններ այլ կազմակերպությունների հետ:

ՀՀ ԳԱԱ-ի դեպքում ինֆրակառուցվածքի մեջ են մտնում ինստիտուտների շենքերը իրենց ապահովումով: Մենք ունենք ինստիտուտներ, որոնք շենքերի բարելավման գործում մեծ ներդրումներ են կատարել: Սակայն մնացած կազմակերպություններում դրանք գտնվում են ծանրագույն վիճակում: Պետական գույքի կառավարման վարչությունը, որը պատասխանատու է ՀՀ ԳԱԱ շենքերի վերանորոգման համապատասխան աշխատանքներ կատարելու գործում, ոչ մի ստույգ միջոցառում դեռևս չի իրականացրել:

*Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել հետազոտական ինֆրակառուցվածքի էական լավացում և թարմացում: Մակայն անհրաժեշտ է հատուկ պետական նպատակային ծրագրով իրականացնել ՀՀ ԳԱԱ համակարգի ինֆրակառուցվածքի արդիականացման ծրագիր և մտցնել այն ՀՀ ԳԱԱ 2015–2020 թվականների հետազոտությունների նախապատրաստվող պլանի մեջ:*

**ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ**

*Հաշվի առնելով կիրառական հետազոտությունների կարևորությունը հանրապետական սոցիալ-տնտեսական զարգացման համար, նպատակ ունենալով նպաստել գիտության, տեխնոլոգիաների, արդյունաբերության գոյություն ունեցող անջրպետների հաղթահարմանը՝ ՀՀ ԳԱԱ-ն ինստիտուտներում կկազմակերպի տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակներ:*

*Նպատակահարմար ենք համարում կիրառական հետազոտություններում ավելի արդյունավետ օգտագործել ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների ներուժը:*

*Անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել վերջերս կազմված ՀՀ ԳԱԱ ինովացիոն առաջարկների փաթեթի իրականացման ուղղությամբ:*

*2016 թվականի ԳԱԱ գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցեց ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանը:*

*Զեկուցումներից հետո տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ 2016 թվականի գիտական գործունեության արդյունքների շահագրգիռ և բովանդակային քննարկում:*

*Ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրեն, թղթակից անդամ Վիգեն Թովուզյանը, ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն Արսեն Հախումյանը և մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Առաքելյանը:*

*Ապա ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ուղեկցությամբ բեմ մտավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Դիմելով ժողովի մասնակիցներին նա ասաց, որ ելույթ չի ունենալու, քանի որ դա կդիտվի որպես քարոզարշավ, բայց պատրաստ է պատասխանելու ներկաների հարցերին:*

*Անդրադառնալով այն հարցին, որ ակադեմիան շատ է քննադատվում, նախագահն ասել է. «Մեր հասարակության մեջ որևէ մեկն ապահովագրված չէ քննադատությունից: Կարծում եմ, այս երկրում ամենաքննադատվող կառույցը նախագահականն է, ամենաքննադատվող անձնավորությունը ես եմ:*

*Քննադատությունից ոչ ոք հաճույք չի ստանում, միայն երևի մազոխիստները կարող են քննադատությունից հաճույք ստանալ: Այդուհանդերձ, որոշ քննադատություններ, եթե առարկայական են, չարությամբ լեցուն չեն, ուղղված են աշխատանքներն ուղղելուն, միշտ*

կարելի է գտնել ռացիոնալ հաստիկ: Այն դիրքորոշումը, որ ազգային ակադեմիան մեզ պետք չէ և սպառել է իրեն, ես, բնականաբար, չեմ կհսում: Եթե կիսեի այդպիսի մոտեցումը, վաղուց մենք այս ուղղությամբ քայլեր կտանեինք: Իմ ցանկությունն է օպտիմալացնել այն մասը, որտեղ արդյունք չկա և ուժեղացնել այն հատվածները, որոնք աշխատում են, որոնք մեր երկրին պատիվ են բերում ու զարգացնում են գիտությունը»:

Մերժ Սարգսյանը, դիմելով ժողովի մասնակիցներին՝ ասել է. «Հանդուրժող եղեք, ակտիվություն ցուցաբերեք, ինքներդ խոսեք հաջողության մասին: Մա էլ երկրորդ խնդիրն է, որ շատերը չեն ցանկանում հրապարակալ հակադրվել սոցետներին, չեն ցանկանում, որովհետև վախենում են, որ «Ֆեյսբուքով», այլ կայքերով կսկսեն խոսել: Հիմա, եթե ուզում ենք մեր տեսակետը պաշտպանել, պիտի անենք դա»:

Մերժ Սարգսյանը գիտությունների ազգային ակադեմիայի անդամներից ավելի շատ ակտիվություն ու նոր գիտական նվաճումներ է ակնկալում. «Ես կրկին ցանկանում եմ անդրադառնալ շատ-շատ մարդկանց պասիվությանը: Գիտեք՝ ազրեսիվ փոքրամասնությունը շատ խնդիրների է խոչընդոտում: Ուստի ես ակնկալում եմ, որ այն մարդիկ, ովքեր կարող են նոր միտք ասել, այն մարդիկ, ովքեր կարող են օգուտ բերել, մի փոքր ավելի ակտիվ լինեն: Դուք էլ պիտի փոխվեք, ինչպես մենք ենք փորձում փոխվել: Այդ փոփոխությունները բոլոր տեղերում անհրաժեշտ են, բայց փոփոխությունը ինքնըստինքյան հարց չի լուծում: Փոփոխությունը պիտի հանգեցնի դրական արդյունքների»:

Դիմելով ներկաներին՝ ՀՀ նախագահն ընդգծել է, որ նրանցից ակնկալում է ակտիվություն, գիտության մեջ նվաճումներ, ակնկալում է, որ այդ նվաճումները հնարավոր լինի օգտագործել պրակտիկայում, որ երիտասարդներին ավելի շատ ընդառաջեն. «Երիտասարդների փորձը քիչ է, բայց էներգիան շատ է: Եվ շատ դեպքերում այդ էներգիայի առկայությունը լավ արդյունքներ է բերում: Իհարկե, մեկ-մեկ բացասական էլ է լինում այդ էներգիան, սակայն հիմնականում լավ արդյունքներ է բերում: Մա է իմ ակնկալիքը ձեզանից»:

Նա հավելել է, որ դեմ չի լինի՝ մայիսին կամ հունիսին, երբ ավարտված կլինեն քաղաքական գործընթացները, նեղ կազմով հավաքվել և քննարկել, թե ինչ քայլեր են հարկավոր երկրում գիտությունը զարգացնելու համար:

Անդրադառնալով ակադեմիայի անդամների բարձրացրած մտահոգությանը՝ կապված ժամանակակից գիտական սարքավորումների պակասի հետ, Մերժ Սարգսյանը նշել է. «Ակնհայտ է, այստեղ որևէ կասկած չի կարող լինել, եթե ժամանակակից սարքավորումներ չկան, ապա տվյալ գիտահետազոտական հաստատությունը ուղղակի չի կարող լիարժեք գիտական գործունեություն ծավալել: Բայց որքան ես տեղյակ եմ, այն ֆինանսավորումը, որ տրվում է, հաշվի է առնվում նաև սարքավորումներ ձեռք բերելու անհրաժեշտությունը: Եթե խոսքը լրացուցիչ գումարներ հատկացնելու մասին է, ապա կոնկրետ ծրագիր պետք է լինի, և կոնկրետ գիտահետազոտական հաստատությունը լրացուցիչ ֆինանսավորում կստանա արդիականացնելու իր սարքավորումները: Ընդհանրական մենք

այսպես հնարավորություն չունենք մեր բոլոր գիտահետազոտական ինստիտուտներն արդիականացնելու»:

Նախագահն անդրադարձել է գիտական աստիճանի շնորհման երկաստիճան համակարգից միաստիճան համակարգի անցնելու մասին խոսակցություններին:

«Ես կարծում եմ, որ այս ուղղությամբ լուրջ տեսակետներ չեն եղել կամ աշխատանք չի իրականացվել, որ գիտական կոչման շնորհման միաստիճան համակարգի անցնենք: Խոսակցություններ լսել եմ, հետաքրքրվել եմ, այդպիսի տրամադրություն չկա: Որոշակի փոփոխություններ նախատեսվում են, բայց, համենայնդեպս, օրենքի նախագիծը գոյություն չունի, և ես չեմ տեսել»:

Նախագահը հավելել է, որ Հայաստանը պետք է համահունչ լինի եվրոպական գիտական միջավայրին, սակայն պետք է պահի իր առանձնահատկությունը: «Ինչ էլ որ անենք, պետք է անենք մտածված և մասնագետների հետ լայն քննարկումներից հետո: Առանց քննարկումների նման օրենքի նախագիծ չի լինելու», – եզրափակել է Սերժ Սարգսյանը:

Ընդմիջումից հետո ժողովականները լսեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ն. Խաչատրյանի «Ամպային հաշվարկների անվտանգության մարտահրավերները» անչափ հետաքրքիր զեկուցումը:

«Գիտություն», մարտ, -3, 2017